



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՈՉ  
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓՈԱՌ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ  
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1969 թ. հունվարի 6)

Յանուն Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ ամեն:

Սուրբ գրական Արարատի մեր երկրեն, Միածնաւէջ մեր սրբազնասուրբ տաճարեն, Քրիստոսի հրաշալի Ծննդան առիթով, ձեզի կուգանք, հավատացյալ զավակներ Մեր, որ ի Հայաստան և ի սփյուռու աշխարհի: Ամեն նման ցնծալի առիթներով Մենք ձեզմով կմխիթարվինք, ձեզմով կգորանանք, ձեզմով լավատես կդառնանք և ձեզի ամենուդ համար աղոթք կկարդանք: Դուք, Մեր սիրելիներ, Մեր հարազատներ, դուք մեր կենդանի եկեղեցին եք, դուք մեր ապրող ու աճող ժողովուրդն եք: Դուք հույսն ու սպասելենն եք և պարծանքը սուրբ Էջմիածնի և Հայոց Հայրապետի:

Արդ, բացեք ձեր սրտերը, ձեր հայու սրտերը և Փրկչի Իջման սուրբ սեղաններեն ընդունեցեք Մեր բերած օրհնությունը և շնորհները մեր Տիրոջ՝ Քրիստոսի լուսաշող Ծննդան և Աստվածահայտնության: Եվ հույսով հափըշտակված դեպի երկինք նայեցեք՝ լսելու պատգամը Բեթղեմեմի հրեշտակներուն՝

«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ինչքա՛ն քաղցր կհնչէ այս երգը, մեր օրերու մարդոց, ժողովուրդներուն բոլոր, որոնք դարերու ծարավը ունին՝ խաղաղ ու արդար կյանքի:

Դիտեցեք ձեր շուրջը, մոտն ու հեռուն, գրեթէ ամեն տեղ՝ խոովահույզ վիճակ, սպառնացող վտանգներ բազում և նույնիսկ մահասփյուռ կրակ պատերազմի:

Փառք երկնքին պայծառ ու բարի, որ աշխարհին և մեզի ամենուս այսօր կբաշխէ հույսը խաղաղության, հույսը փրկության:

Արդ, զավակներ Մեր, երկինք նայեցեք, ձեր հոգիները երկինք դար-

ձուցեք, խաղաղության խոսքով զիրար ողջունեցեք, սիրո շաղախով եղբայրներ եղեք:

Խաղաղություն, սեր՝ ահա խոսքերու ոսկին և ինքը խոսքը, որ էր ի սկզբանե, զի Աստված սեր է և խաղաղության Աստված:

«Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» դարերու աղերսանքը եղավ մեր տանջված ազգին ու եկեղեցիին: Դարեր շարունակ հռչակուած աշխարհը Հայոց և նահատակ ժողովուրդը մեր, պատմության բեմին վրա կանգնած, կենդանի վկաներն են անլուր ողբերգությանց: Ու մտածել, թե մեր ազգի ողբերգության մեծագույնը, մեր օրերեն հազիվ հիսուն և ավելի տարիներ առաջ կատարվեցավ, 1915-ի սև, անգութ տարին: Առաջին ցեղասպանությունը՝ մեր ապրած դարուն:

Հայաստանյայց եկեղեցին և ամեն հայ մարդ ինչպե՛ս հանդուրժեն նոր կրակ ու ավեր, նոր պատերազմներ, այն ալ հյուլեական ահարկու ուժի մեր դարաշրջանին:

Բոլոր ազգերը, բոլոր մարդիկ, մեր նմաններն են, մեր եղբայրները՝ իբրև որդիք միևնույն Արարչին: Այսօր Վիետնամի մեջ մեր արյունն է, որ կհոսի, մեզմե ամեն մեկու հոգիի ու խղճի երակներեն:

Տեր Հիսուս Քրիստոս, սիրովդ Քո հուր «ճմլե սրտերը քար» մեր օրերու մարդոց և փշրե Քո աջովդ ամենափրկիչ՝ պատերազմի գործիքը մահվան: Մենք չենք կամենար պատերազմ ոչ ոքի կողմն և ոչ ոքի դեմ: Նույնիսկ արդարությունը թող խաղաղությամբ ըլլա: Պետությունները ամեն՝

«Թող հալեցնեն իրենց սուրերը և նիզակները և շինեն խոփեր ու մանգաղներ, ոչ մեկ ազգ ուրիշ ազգի վրա թող սուր չբարձրացնեն, և թող այլևս ոչ ոք չուսանի հնարքը պատերազմին» (Եսայի Բ 4):

Այս է հավատամքը մանավանդ մեր եկեղեցիին և ազգին ամբողջ, որ իր մոխիրներեն փյունիկի պես հառնած, իր մայր հողի վրա հաստատ քայլերով կընթանա իր նոր կյանքի ապահով ու լուսավոր ճամփով, օրեցօր աճելով, միշտ կառուցելով երգ ու ծաղիկով:

Իրավ է, մայր Հայաստանը իր վերածնունդը կապի: Տքնության, վերելքի ստեղծարար երթի նոր դարաշրջանն է հայոց պատմության:

Փառքերն անցյալի ներկան կոգեկոչեն, իսկ լուսավոր ներկան կյանք կու տա անցյալին: Այս անցնող տարուն մեր մայր երկիրը, ժողովուրդը մեր, մեկ սիրտ, մեկ հոգի, երկինք բարձրացուց հաղթության կոթողը Սարդարաբադի և կյանքի կոչեց հին Էրեբունին:

Ծշմարիտ է, այո՛, որ շատ դարեր առաջ հին Էրեբունին հիմքերը դրավ նոր Երևանին, բայց առավել ճշմարիտ է, որ նոր Երևանը իր մտքի հուրով, իր բազկի ուժով, երեք հազար տարի հետո, որոնեց, պեղեց և լույս աշխարհ բերավ իր մեծ պատմության առաջին քարը:

Ով հայու սիրտ ունի, կտեսնեն այս ամենը, կզգա, կհրճվի և իր բարի ձեռքը կերկարե ամենայն հայոց ապագան կերտող իր հայաստանցի եղբոր՝ իբրև ընծան իր հայ հոգիին:

Մկրտիչ Պեշկոթաշյանի քնարեն կարծեք երկնքի հրեշտակներն է, որ կերգեն, պատգամ բերելով մեզի այս օրերուն, երբ մեր հայրենի ժողովուրդը մեծ բանաստեղծի ծննդյան հարյուրամյակը կտոնախմբե:

«Երբ ալևոր Մայրն Հայաստան  
Տեսնե գորդիս յուր քովե քով,  
Սրտին խորունկ վերքն դաժան  
Քաղցր արտասովաց բուժին ցողով:

Մեկտեղ հոգնինք, մեկտեղ ցանենք,  
Մեկտեղ թափին մեր քրտիկներ,  
Ըզհունձ բարյաց հերկինս հանենք,  
Որ կյանք առնուն Հայոց դաշտեր:

Ընդ աստեղոք ինչ կա սիրուն,  
Քան զանձկայի եղբայր անուն:

Հայոց եկեղեցին և իր սպասավորները հայու սիրտ ունին: Սուրբ Էջմիածինը ի հնուց անտի, հայրենական ոգիով լեցուն, եղած է հովիվ, եղած է դաստիարակ, եղած է պաշտպան հայրենյաց: Անկորնչելի փառքի տիտղոսն է այդ Մայր Աթոռին և Հայրապետներուն մեր յուսաբան:

Արարատ լեռան կողքին՝ պահակ, Աստված Էջմիածինը պարզևեց հայուն:

Թող Տերը անսասան պահպանե, խաղաղ, անվտանգ երկիրը մեր անըման, անուշն Հայաստան և վեմն ու աղբյուրը անոր հավատքին, անոր հոգիին, լուստ խորանը սուրբ Էջմիածնի:

Միրեցյալ որդիք Մեր, որ ի հայրենիս և որ ի հեռավոր հյուրընկալ ափեր, սուրբ Ծննդյան ավետիսով, կողջունենք ու կօրհնենք զձեզ բոլորդ մաղթելով ամենուդ երջանիկ, անխող երկար տարիներ, սիրով միաբան, մեր մայր եկեղեցվո սուրբ հովանիի ներքև:

Ծնորհք և սէր և խաղաղութիւն Յիսուսի Քրիստոսի Տառն մերոյ, եղիցին ընդ ձեզ, այժմ և յաւէտ. ամէն:

